

Ֆինանսական համակարգի հաշտարարի կողմից ձևավորած 2010 թվականի նոյեմբեր ամսվա նախադեպի ամփոփում

Հաշտարարի գրասենյակը 2010թ.-ի նոյեմբեր ամսվա ընթացքում ստացել է ֆինանսական կազմակերպություններին վերաբերող ընդհանուր քանակությամբ 59 բողոք: Քաղաքացիների՝ ֆինանսական կազմակերպություններին չվերաբերող զանգերն ու այցելությունները Հաշտարարի գրասենյակ բազմաթիվ են: Ֆինանսական կազմակերպություններին վերաբերող 59 բողոքներից 14-ը, համաձայն օրենքի, ենթակա չեն քննության Հաշտարարի կողմից (հաճախորդների մի մասը իրավաբանական անձինք են, մյուսների բողոքները կապված են մինչ Հաշտարարի մասին օրենքն ուժի մեջ մտնելը տեղի ունեցած իրադարձությունների հետ, որոշ պահանջների վերաբերյալ արդեն իսկ առկա է դատարանի որոշում, կամ գործը գտնվում է դատարանի վարույթում, մնացած դեպքերում բողոքները կրում են ընդհանուր բնույթ և ըստ էության չեն պարունակում գույքային պահանջ): Հաշտարարի քննությանը ենթակա 45 բողոքներից 19-ը նոյեմբեր ամսին ստացվել են գրավոր տեսքով:

2010թ.-ի նոյեմբեր ամսին ներկայացված ընդհանուր բողոքների քանակ	59
1. Ենթակա են քննության Հաշտարարի կողմից	45
1.1. Ենթակա են քննության Հաշտարարի կողմից, սակայն Հաճախորդը նախապես չի դիմել ֆինանսական կազմակերպությանը	23
1.2. Բավարարվել են Կազմակերպության կողմից՝ Հաճախորդի ներկայացրած բողոք-պահանջի հիման վրա (որն օգնել են լրացնել Գրասենյակի աշխատակիցները)	1
1.3. Նախնական ուսումնասիրությունից հետո Հաճախորդին խորհուրդ է տրվել պահանջը չհանձնել քննության, քանի որ բացակայում էր Հաճախորդի՝ որպես սպառողի, շահերի ոտնահարման փաստը	2
1.4. Ընդունվել են քննության գրավոր պահանջի ներկայացմամբ, կապված են՝	19
1.4.1. վարկային գործարքների հետ	3
1.4.2. վճարահաշվարկային գործարքների հետ	2
1.4.3. ապահովագրական հատուցումների հետ	2
1.4.4. գրավատների գործունեության հետ	12

2010թ.-ի նոյեմբեր ամսին գրավոր պահանջի ներկայացմամբ քննության ընդունված բողոքներ, ուղղված՝	19
Բանկերի դեմ	5
Ապահովագրական ընկերությունների դեմ	2
Գրավատների դեմ	12

2010թ.-ի նոյեմբեր ամսին գրավոր պահանջի ներկայացմամբ քննության ընդունված բողոքների ելքեր՝

Պահանջը բավարարվել է հաշտեցման միջոցով	0
Պահանջը մերժվել է	0
Պահանջը մասնակի բավարարվել է	11
Պահանջի քննությունն ընթացքում է	8
Պահանջի քննությունը մերժվել է	0

Հաշտարարի գրասենյակ կարելի է դիմել՝ զանգահարելով 58-23-22, 58-23-21 հեռախոսահամարով կամ այցելելով Վազգեն Սարգսյան 26/1, «Էրեբունի Պլազա» բիզնես կենտրոն, 4-րդ հարկ, 411 սենյակ: E-mail: info@fsm.am Web: www.fsm.am